## ՀՈԿՏ. 13-Ի ՏՕՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՎԱՆՈՒՄ

Վանից, յունիսի 20-ից, հետևեալն են գրում՝ հայ տառերի գիւտի 1500-ամեայ և հայկական տպագրութեան 400-ամեայ յոբելեանի տօնակատարութեան մասին.

«Վանի Հայկական Բարես. Ընկերութիւնը, ասկէ մօտ մի ամիս առաջ նախաձեռնարկ եղաւ Վանի մէջ տօնել հայկական տպագրութեան 400-ամեակը։ Բայց որպէսզի աւելի արդիւնաւոր, ճոխ և համայնական լինէր տօնակատարութիւնը, հրաւիրեց տեղական քաղաքական կուսակցութիւններէ, ընկերութիւններէ, խմբագրութիւններէ և դպրոցներու ներկայացուցիչներէ լիազօրներ, ինչպէս նաև ժողովուրդի մէջէն քանի մը ականաւոր անձինք՝ խորհրդածելու այդ խնդրոյն շուրջ, նոյն Ընկերութեան մանկապարտէզի սրահին մէջ։ Հանդէսը յետաձգուեցաւ առաջիկայ աշնան (երևի ըստ Մայր Աթոռոյ կարգադրութեան, իբր համազգային մի տօն կատարելու հոկտ. 13-ին)։

«Ցիշեալ Ընկերութիւնը նպատակ ունի այդ տօնի առթիւ իր նոր հաստատած տպարանէն ի լոյս ընծայել հայկական հնութիւնց գեղեցիկ պատկերազարդ ընդարձակ ուսումնասիրութիւն մը։